№ 35. Կիրակի, Նոյեմբերի 6—1866. № 35.

ՎԱՃԱՌԱԿԱՆ

Թիֆլիսի առեւտրական գազեթ:

Հրատարակվում է շաբաթը մէկ անգամ կէս թերթ, կիրակի օրերով: 10 ամսվայ գինը Մարտից մինչեւ Յունվարը քաղաքումս՝ 2 մանէթ 50 կոպ., դուրսը՝ 3 մանէթ:

ՇԱԲԱԹԱԿԱՆ ԹԵՐԹ

(ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ)

Գազեթին ստորագրվել կարելի է խմբագրողի մօտ:
Գազեթումը հրատարակվելու կընդունվին մասնաւոր յայտարարութիւններ: Գների մասին կարելի է իմանալ խմբագրատանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

«Վաճառականը» 1867 թւին: Տէրութենի կարգադրութիւնները: Բարձրագոյն քրէական դատարանի դատավճռից եւ էդ բանի մասին հետեւեալ կարգադրութիւնները: Աչ մէկ պատուաւոր գործով պարապիլը ամօթ չէ մարդու համար: Առեւտրական տեղեկութիւններ:

„ՎԱՃԱՌԱԿԱՆԸ"
1867 ԹՒԻՆ.

Ինչպէս հրատարակել էինք „Վաճառականի" 30-դ № ումը 1867 թւին „Վաճառականը" կտպվի էնպիսի թերթերի վրայ, որ առաջը հիմիկվան 4 կէս թերթի տեղ 5-ից մինչեւ 6-ը լինի իր մեծութենով: Գալ տարվան ստորագրվողները կստանան ձրիաբար „Առեւտրական բառարան", որի մէջ ամփոփված կլինին թէ առեւտրին վերաբերեալ գլխաւոր գործածված բառերը եւ թէ գլխաւոր փողերի արքանութիւնը Ռուսի փողի հետ համեմատելով: 1867 թւին „Վաճառականի" մէջ կտպվին չարունակ ամեն նումերումը „Ռուսաց տելեգրաֆի ընկերութենից" ստացած թէ առեւտրին եւ թէ միւս հասարակական գործերին վերաբերեալ նոր համբաւները: „Վաճառականի" գինը գալ տարի թէ քաղաքումս եւ թէ դուրսը կլինի 5 մ. Գալ տարի „Վաճառականը" կդուրս գայ հինգշաբթի օրերով:

Հիմիկվանից ընդունվում է գալ տարվան ստորագրութիւնը քաղաքումս՝ „Վաճառականի" խմբագրողի եւ նրա գլխաւոր գործակից պ. Ա. Երիցեանցի մօտ, նմանապէս եւ գրավաճառ պ. Ա. Էնֆիաճեանցի դրատանը, իսկ օտար քաղաքայինները պէտք է դառնան ուղղակի „Վաճառականի" խմբագրողին էս հասցէով՝ „Վաճառականի" խմբագրող Գէորգ Տէր-Աղէքսանդրեանցին Թիֆլիսումը", իսկ Ռուսերէն՝ „Редактору Тифлисскаго Торговаго листка Егору Тер-Александрову въ Тифлисѣ".

Խնդրում ենք 1867 թւի մեր գազեթին ստորագրվել ցանկացողներից, որ նրանք յայտնեն իրանց ցանկութիւնը մեզ մինչեւ էս տարվան նոյեմբերի վերջը, որ կարողանանք ստորագրվողների թւի համեմատ կարգադրութիւն անել գալ տարվան համար:

ՏԷՐՈՒԹԵՆԻ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՔՐԷԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԱՏԱՎՃՌԻՑ ԵՒ ԷԴ ԲԱՆԻ ՄԱՍԻՆ ՀԵՏԵՒԵԱԼ ԿԱՐԳԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Նորին կայսերական Մեծութենի հրամանով հաստատված եւ էս հետեւեալ անձներից բաղկացած Բարձրագոյն քրէական դատարանը՝ Նախագահ-Իշխան Գագարինից, անդամ-Նորին կայսերական Բարձրութիւն պրինց Օլդենբուրգսկուց, կոմս Պանինից, Մեռլինից, Բաշուցկուց եւ կարնիօլին-Պինսկուց, իրաւաբանութենի նախարար Զամեատնինի եւ առենադպիր Նեխլյուդովիչի ներկայութենով քննեց կարակոզովի չարագործութենի մասին գիտացողների, ծածուկ ընկերութիւններին պատկանողների եւ ուրիշ յանցանքների մէջ դատապարտվածների գործը եւ էս տարի սեպտեմբերի 24-ին գրեց իր դատավճիռը 34 դատապարտվածների մասին էս ձեւով:

1.) Ժառանգական պատուաւոր քաղաքացի Նիկոլայ Անդրեեվ ԻՇՈՒՏԻՆԸ (26 տարեկան): որովհետեւ հաստատվեցաւ դրա վրայ, որ դա կառավարութենին չէ իմաց տվել իրան յայտնի էլած կարակոզովի չար դիտաւորութենի մասին եւ էնպիսի ընկերութիւններ է հիմնել, որոնց գործողութիւնները դէպ ի անտեսական յեղափոխութիւնն է էլել ուղղած, սեպհականութենի իրաւունքները քանդելով եւ թագաւորական կառավարութիւնը կործանելու, 1866 թւին տպված քրէական կանոնների 241, 242, 243 եւ 318 յօդուածների հիման վրայ, պիտի զրկվի իր ունեցած բոլոր իրաւունքներից եւ խեղդվի:

2.) Ազնիւ. Պետր Դմիտրիեվ ԵՐՄՈԼՈՎԸ (20 տարեկան), 3.) ազնիւ. Նիկոլայ Պավլով ՍՏՐԱՆԴԵՆԸ (23 տարեկան) եւ 4.) ազնիւ. Դմիտրի Ալէկսեեվ ԻՒՐԱՍՈՎԸ (23 տարեկան), թէպէտ արքայասպանութենով թագաւորական յեղափոխութիւն անելու համար ընկերութիւն կազմելու չար մտքեր յայտնելումը մասնակից են էլել եւ իրանց յայտնի չարագործութենի մասին չեն իմացում տվել, բայց որովհետեւ Երմոլովը եւ Ստրանդենը կարակոզովին, առաջին անգամ Պետերբուրգ գնալիս, արգելել էին չարագործութենի կատարելը, իսկ Իւրասովը ոչ թէ միայն չէ համաձայնել արքայասպանութենի չար դիտաւորութենին, այլ եւ ընդդէ-

մացել է էդ բանին, էսդուր համար էլ քրէական օրէնքների 774 յօդուածի հիման վրայ, սպանելու փոխանակ, պիտի զրկվին իրանց ունեցած բոլոր իրաւունքներից և աքսորվին մետալի հանքերումը մշակութիւն անելու՝ Սարանդեևն ու Իւրասովը մշտապէս, իսկ Երմալովը, որովհետև անչափահաս է, քրէական օրէնքների 139 յօդուածի հիման վրայ, միայն 20 տարի ժամանակով:

5.) Ազնիւ Մակսիմիլեան Նիկոլաեվ ԶԱԳԻԲԱԼՈՎԸ (24 տարեկան), 6.) գուբերնսկի սեկրետար Վեաչեսլավ Նիկոլայեվ ՇԱԳԱՆՈՎԸ (26 տարեկան) և 7.) արձակված ճորտ Օսիպ Անտոնով ՄՈՏԿՈՎԸ (20 տարեկան), որովհետև „օրգանիզացիա„ անունով ընկերութենի անդամ են էլել, կատարեալ տեղեկութիւն են ունեցել էդ ընկերութենի չար դիտաւորութենի մասին և արքայասպանութենով թագաւորական յեղափոխութիւն անելու համար ընկերութիւն կազմելու մասին իրանց գիտեցած չար մտքերը չեն իմաց արել, քրէական օրէնքների 318 և 250 յօդուածների հիման վրայ, պիտի զրկվին իրանց ունեցած բոլոր իրաւունքներից և աքսորվին մշակութիւն անելու բերդերումը Զագիբալովը ու Շագանովը 12 տարի ժամանակով, իսկ Մոտկովը, որովհետև անչափահաս է, քրէական օրէնքների 139 յօդուածի հիման վրայ, 8 տարով:

8.) Մոսկովի համալսարանի կանդիդատ Պետր Ֆեոդորով ՆԻԿՈԼԱՅԵՎԸ (22 տարեկան), որովհետև „օրգանիզացիա„ անունով ընկերութենի անդամ է էլել, կատարեալ տեղեկութիւն է ունեցել էդ ընկերութենի չար դիտաւորութենի մասին և Ֆեոդոսեևվին միջոցներ է տվել նորա հօրը սպանելու համար, որ էդպիսով վերոյիշեալ չարագործ ընկերութենի համար բաւական փող ձեռք բերել, քրէական օրէնքների 2-դ մասի 318 և 250 յօդուածների հիման վրայ պիտի զրկվի իր ունեցած բոլոր իրաւունքներից և աքսորվի մշակութիւն անելու բերդերումը 12 տարով:

9.) Տանու վարժապետ Իվան Ալէքսանդրով ԽՈՒԴԵԱԿՈՎԸ (24 տարեկան), թէպէտ չէ գիտացել և չէ էլ օգնել Կարակոզովին չարագործութիւնը կատարելու, բայց որովհետև նորան յայտնի է էլել ծածուկ յեղափոխական ընկերութենի գոյութիւնը և նորա կանոնների ընդդէմ դիտաւորութիւնները, քրէական օրէնքների 3-դ մասի 318 յօդուածի հիման վրայ, պիտի աքսորվի Սիբիրի ամենահեռաւոր տեղերումը բնակվելու:

10.) X-դ կարգի աստիճանաւոր Օրեստ Վասիլեվ ՄԱԼԻՆԻՆԸ (24 տարեկան), 11.) Պետրովեան ակադեմիայի ունկնդիր Դմիտրի Ալէքսեև ԻՎԱՆՈՎԸ (22 տարեկան), 12.) քահանայի որդի Ֆեոդոր Պետրով ԼԱՊԿԻՆԸ (19 տարեկան) և 13.) ազնիւ Ալէքսանդր Իվանով ԻՎԱՆՈՎԸ (23 տարեկան), թէպէտ „օրգանիզացիա„ անունով ընկերութենի անդամ լինելու և էդ ընկերութենի՝ կանոնների ընդդէմ դիտաւորութիւնների մասին տեղեկութիւն ունենալու համար, քրէական օրէնքների 2-դ մասի 318 և 250 յօդուածների հիման վրայ պիտի զրկվէին իրանց ունեցած բոլոր իրաւունքներից և աքսորվէին մշակութիւն անելու բերդերումը 10 տարով, բայց որովհետև նորանք միշտ ընդդիմացել են „օրգանիզացիայի„ էն չար դիտաւորութիւններին, որոնցով ուզեցել են զոռով յեղափոխութիւն անել և էդ ընկերութենին ընդդիմանալու համար աշխատել են կազմել մէկ առանձին խումբ, առանց էն չար դիտաւորութիւնների, որ ունեցել են „օրգանիզացիայի„ գլխաւոր անդամները և էդ խմբի նշանակութիւնն է էլել էն նպատակներին հասնելը, որ քրէական օրէնքների 319 յօդուածումն են նշանակված և բացի էդ նորանք և մանաւանդ Դմիտրի և Ալէքսանդր Իվանովները բոլոր սրտով խոստովանեցան իրանց յանցանքը, իսկ Լապկինը և Դմիտրի Իվանովը դեռ անչափահաս են, էսդուր համար նորանցը ենթարկելով քրէական օրէնքների 1 մասի 319 յօդուածումը նշանակված պատժին, քրէական օրէնքների 774 յօդուածի հիման վրայ, պիտի զրկվին իրանց ունեցած բոլոր իրաւունքներից և աքսորվին Սիբիրումը բնակվելու:

14.) Ազնիւ Վիկտոր Ալէքսանդրով ՖԵՕԴՈՍԵԵՎԸ (23 տարեկան), որովհետև իրա հօրը սպանելու միջոցներ է էլել գործ դնում, բայց չէ կարողացել էդ յանցանքը գլուխ բերել՝ բանտումը բռնվելու պատճառով, քրէական օրէնքների 2-դ մասի 1457 յօդուածի հիման վրայ, պիտի զրկվի իր ունեցած բոլոր իրաւունքներից և աքսորվի Սիբիրումը բնակվելու և էնտեղ եկեղեցական զղջմանը ենթարկելով:

15.) Վարժապետ Մակսիմիլեան Օսիպով ՄԱՐԿՍԸ (50 տարեկան), մանաւոր մարդու սպանելու գործումը օգնելու համար, քրէական օրէնքների 2-դ մասի 1457 յօդուածի հիման վրայ, պիտի զրկվի իր ունեցած բոլոր իրաւունքներից և աքսորվի Սիբիրումը բնակվելու:

16.) Ազնիւ Պավել Պետրով ՄԱԵՎՍԿԻՆ (27 տարեկան), որովհետև մշակութենի աքսորված թագաւորական յանցաւորներին թաքցրել է, քրէական օրէնքների 2-դ մասի 316 յօդուածի հիման վրայ, պիտի զրկվի իր ունեցած բոլոր իրաւունքներից և աքսորվի Սիբիրումը բնակվելու:

17.) Աստիճանաւորի որդի Բոլեսլավ Պետրով ՇՈՍՏԱԿԵՎԻՉԸ (22 տարեկան), մշակութենի աքսորված թագաւորական յանցաւորի թաքցնելու համար, քրէական օրէնքների 2-դ մասի 316 յօդուածի հիման վրայ, որովհետև պարզ սրտով իր յանցանքը խոստովանեցաւ, պիտի էդ յօդուածումը նշանակված փոքր պատժին ենթարկվի, այս ինքն պէտք է իր ունեցած բոլոր իրաւունքներից զրկվի և աքսորվի Տոմսկի գաւառումը բնակվելու:

18.) Պրովիզոր Ադոլֆ Ֆրանցով ԼԱՈՒՆԳԱՈՒԶԸ (29 տարեկան), որովհետև ծածուկ ընկերութենի գոյութենի մասին տեղեկութիւն է ունեցել, բայց յայտնապէս չէ գիտացել նորա բոլոր նպատակները և բացի էդ թոյն է տվել էնպիսի մարդուն, որն որ տալու իրաւունք չէ ունեցել, պիտի բերդումը բռնվի 8 ամսով, քրէական օրէնքների 867 յօդուածի հիման վրայ մշտապէս, արգելելով նորան թունաւոր և սաստիկ ներգործող նիւթեր ծախելու:

19.) Ազնիւ Կոնստանտին Ֆեոդորով ԿԻՋԻՆԸ (22 տարեկան), 20.) դպրի որդի Վասիլի Իվանով ՍՈԲՈԼԵՎԸ (22 տարեկան), 21.) Պետրովեան ակադեմիայի ունկնդիր Ալէքսէյ Եգորով ՍԵՐԳԻԵՎՍԿԻՆ (20 տարեկան), 22.) Թագաւորական ճորտ Ֆէօֆան Ալէքսեև ԲՈՐԻՍՈՎԸ (21 տարեկան), 23.) Պետրովեան ակադեմիայի ունկնդիր Դմիտրի Ալէքսեև ՎՈՍԿՐԵՍԵՆՍԿԻՆ (22 տարեկան), 24.) Ազնիւ Նիկոլայ Եակովլեվ ԿՈՒՏԻԵՎԸ (26 տարեկան), 25.) Պետրովեան ակադեմիայի ունկնդիր Ապոլոն Պետրով ՊՈԼՈՒՄՈՐԴՎԻՆՈՎԸ (21 տարեկան), 26.) Մոսկովի 3-դ գիմնազիայի վարժապետ, կոլեժսկի սովետնիկ Կոնստանտին—Բոլեսլավ Դանիլով ՏՐՈՒՍՈՎԸ (33 տարեկան) և 27.) Իշխան Վարլաամ Ջոնսալինով ՉԵՐԿԵԶՈՎԸ (20 տարեկան), որոնցից ոչ մէկը չէ ունեցել յայտնապէս տեղեկութիւններ էն ընկերութենի մասին, որի մէջ իրանք էլ մասնակից էին, բայց միայն գիտացել են էդ ընկերութենի գոյութիւնը, քրէ-

Ամեն տեսակ պատուաւոր աշխատանքը ոչ թէ մարդուս պատիւը ցածացնում է, այլ միշտ բարձրացնում: Ոչ թէ որ և իցէ պատուաւոր գործ չշինելն է ամօթ, այլ բոլորովին անգործ մնալը: Մարդուս պարապմունքը ի՞նչ տեսակ բան էլ կուզէ լինի, թէ ոսկերչութիւն, թէ սեղապանութիւն և թէ վաճառականութիւն, մէկ տեսակ պատիւ է բերում մարդուս, եթէ էդ գործերի կատարելիս նա իր պատուականութիւնը չէ կորցնում: Ամենևին ամօթ չէ մարդու համար և բոլորովին նրա պատւին չի դիպչի, եթէ նա իր պատւականութիւնը պահպանելով պարապում է ոչ թէ ոսկեղէն ու արծաթեղէն բաների շինելով և զանազան թանկագին փարչեղէնի առուտուրով, այլ, օրինակ, հենց կաւէ ամաններ շինելով և փէտ ու գործլի ծախելով: Մարդն է իր արհեստին, իր պարապմունքին պատիւ բերում և ոչ թէ արհեստը մարդուս: Կարող եմ ազնիւ արհեստով պարապիլ, բայց մի և նոյն ժամանակը կեղտոտութենի և ցածութենի վերին աստիճանին հասնել. կարող եմ նմանապէս շատ անմեղ բաներով պարապիլ, շատ կեղտոտ ու մրոտ գործիքներ բանեցնել իմ դուքանումը կամ իմ ֆաբրիկայումը բանելիս, բայց ոչով չի կարող ասել, թէ ես չեմ կարող իմ պատուաւորութիւնը լիովին պահպանել: Հաց թխող եմ, խոտ ծախող եմ, բայց իմ բանը պարզ եմ բռնում, հաշիւներս ուղիղ և օր ու գիշեր աշխատում եմ չխաբել ինձ հետ գործ ունեցողներին և իմ պատիւը պահպանում եմ իմ աչքի լոյսի պէս. դու թանկագին ակնեղէններ ես ծախում և շատ նուրբ ու ազնիւ գործիքներ ես բանեցնում քո ֆաբրիկայումը, բայց քեզ հետ ամեն գործ ունեցողին զրկում ես, ամեն տեսակ կեղտոտ հնարքներ ես գործ ածում առուտուրիդ մէջը... Դու ինքդ դատաստան արա, ո՞րը մեզանից աւելի արժանաւոր պէտք է համարվի:

Ամեն արհեստաւոր, ամեն տեսակ գործ կատարողն էլ հարկաւոր են մարդկային ընկերութիւնների համար: Մէկ կերպ պիտանի են, ի հարկէ իրանց ժամանակին, թէ դերձիկը՝ երբ մեր հագուստը հնացել է և նորն ենք ուզում կարել տալ, թէ հաց թխողը՝ երբ սընդուկներումս հացը պակսել է և մենք քաղցել ենք, թէ իրաւաբանը՝ երբ մենք ոմքնու հետ վէճ ունինք և դատաստանին ենք դիմում, թէ ոչխարապանը՝ որ կաթն ու եղ տայ մեզ և բուրդն ուղարկէ ֆաբրիկայի տէրերին մահուդ շինելու և թէ երկրագործը՝ որ ցորեն, գարի, աճար, բրինձ և ուրիշ էսպիսի մեզ հարկաւոր ուտելեղէններ ցանէ ու բերէ քաղաք ծախելու: Մէկը միւսին օգնում է, մէկը չի կարող ապրիլ առանց միւսի, որովհետև մէկ մարդ հնար չունի իրան կեանքի մէջը հարկաւոր ամեն բաները պատրաստելու: Մի՞թէ կարելի է, որ մէկ մարդ մի և նոյն ժամանակը երկրագործ էլ լինի, ջրաղացպան էլ, հաց թխող էլ, ոչխարապան էլ, մահուդ շինող էլ, դարբին էլ, ոսկերիչ էլ և այլն և այլն: Անկարելի բան է: Ուրեմն և անխղճմտանք բան կլինի մեր կողմից, եթէ մէկ տեսակ չպատուենք բոլոր խղճմտանքով վարվող արհեստաւորներին:

Մէկ քանի փոքրահոգի մարդիկ աշխատում են ծածկել իրանց ծնողների ով լինիլը և նրանց պարապմունքը, եթէ կամ ցած աստիճանի և հասարակ կոչման մարդիկ են էլէլ նրանք և կամ մեզանումը ,,սորին,, կոչված արհեստով են էլէլ պարապում: Մոռանում են էդպիսի փոքրահոգիները, որ էդպիսի ստորին կոչման ծնողներից առաջ գալն ու բարձրանալը իրանց համար պարծանք պէտք է լինի և ոչ թէ ամօթ: Պարծանք է էդպիսիների համար էդ բանը, որովհետև իրանց ունեցած քիչ միջոցներով կարողացել են բոլոր դժուարութիւններին յաղթել և բարձր կոչմանը հասնել: Մի՞թէ ամօթ պէտք է լինի ինձ համար, որ պապս մշակ լինի էլած և հէրս հաց թխող, բայց ես բամբակեղէնի կամ բրդեղէնի ֆաբրիկայի տէր լինիմ: Էդուրից պէտք է հետևացնել որ ես էնքան շնորհալի եմ էլէլ և էնպէս օրինաւոր գործ եմ ածել իմ արդիւնքները, որ կարողացել եմ մեծ դումարների տէր դառնալ և ֆաբրիկաներ բաց անել: Իսկ պապս և հէրս չեն կարողացել կամ իրանց արդիւնքը լաւ գործ ածել, կամ էնքան պահպանողութիւն չեն ունեցել, որ կարողացել էին բաւական դումարներ ժողովել՝ աւելի մեծ գործերին կպչելու և ջուր կրելուց ու հաց թխելուցը ազատվելու: Էդ նրանց պակասութիւնն է: Իսկ նրանց պակասութիւնը իմ մեղը չի կարող լինիլ բոլորովին և ինձ համա բանպատուութիւն չէ, որովհետև նրանք իմ խելքով չէին վարվում, այլ իրանց խելքով: Ամեն մարդ պատւվում է կամ անարգվում է իր արարմունքների համար: Մէկը միւսի փոխանակ ո՛չ մէկ ժամանակ ոչ էլէլ է պատասխանատու և ոչ էլ թէ լինելու է: Էս միտքը ընդունում են ամեն իրաւաբանները և դա բոլոր թագաւորութիւնների օրէնքների հիմն է համարվում:

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ:

Լիվերպուլ, նոյեմբերի 16.

Էսօր ծախվեցաւ էստեղ 10,000 հակը բամբակ, բայց գները թուլանալու վրայ են: Ամերիկայի միջին տեսակը 15 պէնս:

Մանչեստր նոյեմբերի 18.

Էստեղի առուտուրը թուլացաւ. ամեն տեսակ ապրանքների գները վեր ընկան:

Պետերբուրգ, նոյեմբերի 20.

Կուրսը Լոնդոնի վրայ . 31 պէնս:
Պարիժի վրայ . . 323 սանտիմ:
5% Լատարէյով առաջին փոխառութենի տոմսակները 111½ մանէթ:
— Երկրորդինը 107 մանէթ:
Ոսկին . . . . . . 6 մ. 48 կ.

Թիֆլիս, նոյեմբերի 5.

Շաքարը Ֆրանսիացոց 9 մ. 80 կ.
— Ռուսինը . . 10 մ. 40 կ.
Արծաթը 84% . . . 240 մ.
— 72% . . . . . 75 մ.
Ոսկին . . . . . . 6 մ. 90 կ.

Дозволено цензурою Ноября 6-го 1866 г.
Ձ. ԷՆՖԻԱՃԵԱՆՑԻ ԵՒ ԸՆԿ. ՏՊԱՐԱՆՈՒՄԸ:
Խմբագրող եւ հրատարակիչ Գ. Տէր Աղէքսանդրեանց: